

Պ Ա Տ Գ Ա Մ .

Ո՞վ դու համեստ իմ հեղ թռչնիկ,
Վաղուց չէիր երգում մեղմիկ,
Գիտեմ դու ինձ մոռացել ' իր,
Սև բաղդիս պէս հեռացել ' իր .

Այժմ եկար կարեկցաբար,
Կտցիդ բռնած լարած քնար,
Բուժել սրտիս խոր խոցերը,
Մեղմել կիզող վառ բոցերը :

Ուրեմն քեզ այս խնդրումեմ,
Սիրուն թեզ համբուրումեմ .
Երգիր պատմիր տեսածներդ,
Բաղդիս մասին լսածներդ :

Բաղդիս մասին ի՞նչ բան գիտես,
Լինի՞լ պիտի միշտ սև երես,
Եւ մոռացկոտ, դանդաղաքայլ,
Օտարապաշտ ու այլ և այլ :

— Երեկ տեսայ ես քո բաղդին,
Վայ էր տալիս նա քո գլխին,
Աչքերը թաց, գլուխը ցած,
Մազերն շաղ, ոտները բաց :

Նա ինձ յանձնեց որ քեզ ասեմ,
Զմոռանամ այլ միշտ կրկնեմ .
« Մեղաւոր չէ բաղդդ այնքան,
Որքան ինքդ, յիմա՛ր անբան :

Բա՛ւ է լինիս դիւրահաւատ,
Խղճմտանօք արդարադատ,
Այդպէսներին է որ կասեն,
« Սոված ճաշին կըքնեն » :

« Երբ չես լսում այս խրատին՝
Ի՞նչ անէ քեզ արծաթ ոսկին .
Ոտիդ տակին փռած լինի,
Զես համարիլ բան պիտանի :

« Ինչպէս արիր անցեալներում,
Պատճառեցիր շատ զարմացում .
Կարծեցիր որ պիտի ասեն՝
Ահա՛, ահա՛ ոուրբ մարգարէն :

« Եւ ասացին հակառակն .
Էշն ի՞նչ անէ գէր դմակն :

Այլ պիտի տալ մէկ աղուէսի,

Ժիր, խաբուսիկ աներեսի,

« Մինչ յագենալն ինքն ուտէր,

Աւելցուկն թռչնոց թողնէր.

Թող առիւծն հա մռնէր,

Զայրութիցն իրան նեղէր

« Գիցուք թէ հենց ես բաղդն եմ,

Բայց յիմարին ես ի՞նչ անեմ.

Այլ է ես տամ՝ նա վեր չառնէ,

Այլ է չըտամ՝ նա պահանջէ.

« Կարծեմ հիմայ փորձդ շատ է,

Լաւ մտածիր, խոհեմ դատէ.

Բաղդն է վատ՝ թէ դու յիմար,

Որ մնացիր քաղցած անճար . .

— Այո՛ այո՛ մեղաւոր եմ,

Սխալներս այժմ գիտեմ.

Բարի բաղդս թող ինձ ներէ,

Կրկին ինձի միտն բերէ.

Խոստանումեմ խօսքն լսել,

Ինչ որ ասէ՝ ճիշտ կատարել.

Սուտը ատեմ, խիղճս պաշտեմ,

Ինչպէս ցայսօր միշտ արել եմ.

Այս երբ լսեց իմ թռչնիկը,

Զարկեց իրար իւր թևերը.

Զայն արձակեց խիստ բարկութեամբ,

Վերջն ասաց ինձ մեղմով թեամբ.

« Գնա՛ գնա՛, յիմար հոգի,

Զես խրատուել այսքան տարի.

Բաղդը խռով է քեզանից,

Ո՛չ այլ ինչի՛ց՝ լոկ այս բանից.

« Ողորմելի՛, ե՞րբ կարթնանաս.

Երկաթ պիտի դու քնանաս.

Հեռացիր դու խղճմտանքից,

Այդ օղային սուտ անունից.

« Այսուհետեւ թէ որ ուղես,

Բաղդիդ քեզ հետ սիրով պահես՝

Օրէնք արա՛ մարդ խաբելն,

Բան ու փեշակ՝ սուտ խօսելն.

« Այս էլ պիտի ես քեզ ասեմ՝

Գեռ քանի որ մոռացել չեմ.

Բազմ ու գանձը եղբայրներ են,
Միշտ հանապազ իրար կօգնեն:

« Ո՛չ գանձն է առանց բազմի,
Եւ ոչ բազմն՝ առանց գանձի.
Ուրեմն դու խոհեմ՝ ապրիր,
Յոյսդ միայն բազմին մի՛ դիր:

Եթէ ասածս միշտ անես,
Եւ անխափան միշտ կատարես՝
Այնուհետեւ գանձն ու բազմն
Կըբուժեն քո բոլոր ախտն:

« Միսը դու կեր զատկէ զատիկ,
Բոլոր տարին սոխ ու հատիկ,
Հաց ու աղցան և սառն ջուր,
Խիստ անվնաս լաւ կերակուր:

« Չայ շաքարն խիստ վատ բան է,
Գործածես դու՝ Աստուած չանէ.
Գինի, օղի, իւղ ու պանիր,
Ամենևին բերան մի՛ դիր:

« Երբ ծնուել ես հայր Ագամից
Առ օրինակ հենց նորանից,
Արով լինիս համեստ որդի,
Մի խիթարիչ հօրդ սրտի:

« Երբէք շորի դու փող մի տար,
Չիցէ խաբէ քեզ կինդ չար,
Յանկարծ տեսնես մերկացել էք,
Փառք ու պատուից դուք ընկել էք:

« Եթէ դու այս խրատներն,
Անխախտ պահես, գիտէ Տէրն,
Կարճ միջոցում հարուստ կըլինիս,
Թէ ոչ՝ պիտի քաղցած մեռնիս:

— Խրատաբեր դու իմ՝ անդին,
Գնա ասա իմ հրեշտակին,
Խղճմտանքից չեմ հեռանալ,
Պատգամներն չեմ մոռանալ:
Այս եմ տեսել իմ հօրիցս,
Եւ միշտ լսել իմ մօրիցս,
Լաւ է լինիլ աղքատ արդար,
Բան հարուստ՝ ժլատ վատթար:

Գ. Մ. Օհանջանեանց: